ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՓԱՍՏԱԲԱՆԻ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄ

ՓԱՍՏԱԲԱՆ ՌՈՒԲԵՆ ԲԱԼՈՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ԿԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՎԱՐՈՒՅԹ ՀԱՐՈՒՑԵԼՈՒ ՀԱՐՑԸ ՔՆՆԱՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Քննության առնելով Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Լուսինե Հակոբյանի 28.10.2014թ. գրավոր դիմումի հիման վրա փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր թիվ 1115) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հարցը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի՝

1. **<u>Դիմումի բովանդակությունը և դիմողի պահանջը.</u>**

Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանը և Լուսինե Հակոբյանը (**այսուհետ Դիմող** կամ **դիմող կողմ**)՝ դիմելով Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատ (**այսուհետ՝ Պալատ**), ներկայացրել են Պալատի անդամ, փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից Վարդան Պետրոսյանի գործի քննության ընթացքում և այդ գործի վերաբերյալ զանգվածային լրատվության միջոցներով արված հայտարարությունները, որոնցով Ըստ Դիմողի ներկայացուցչների՝ հիմնավորվում է փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից փաստաբանի վարքագծի կանոնների մի շարք խախտումներ:

Դիմողը վկայակոչելով Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի 2.2.3, 2.6.1, 3.7.1, 4.1, 4.3, 5.1.2 և 5.2.1 ենթակետերով նախատեսված կանոնները նշել է, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը NEWS.am-ի հետ զրույցում ասել է, որ դերասանի փաստաբաններին կարծես թե կարիք կա Քրեական օրենսդրություն բացատրելու:

Դիմող կողմը նշել է, որ 16.06.2014թ. «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդման ժամանակ Ռուբեն Բալոյանն անդրադառնում է Վարդան Պետրոսյանի սթափությունը գնահատած բժշկի կազմած թվով 2 արձանագրություններին, որոնցից մեկն առաջին պատճենն է, որի մեջ ութ օր անց կատարվել է ավելացում և հայտարարում, որ սթափությունը ստուգող երկրորդ արձանագրության մեջ գրված է «արտաշնչած օդի մեջ ալկոհոլի հոտ», սակայն չի ասում, որ այդ բառերից առաջ գրված է «ստուգման մեթոդ»:

Ըստ Դիմողի՝ փաստաբան Ռուբեն Բալոյանն իր վստահորդներին պատշաճ խորհրդատվություն չի տրամադրում, չի բացատրում, որ իրենք ի պատասխան պաշտպանական կողմի հարցերի՝ իրավունք չունեն դրսևորելու նման ագրեսիվ և անհարգալից վարքագիծ և որ այդպիսի գործողությունները կարող են համապատասխանել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի

27 **նոյեմբերի 2014թ.**
թիվ 406-**Ա/ԿԳ**-14161

հանցակազմին:

Դիմողը նաև նշել է, որ պատշաճ խորհրդատվություն չտրամադրելով՝ Ռուբեն Բալոյանը չի գործում ի շահ իր վստահորդների, ինչի հետևանքով նրանք պարբերաբար կատարում եմ հանցագործություն:

Դիմողի ներկայացուցիչները՝ վկայակոչելով Կանոնագրքի 3.7.1 ենթակետը՝ նշել են, որ փաստաբան Ռուբեն Բալոյանն իր դիտարկումները ներկայացնում է տուժող կողմից, ինչը ոչ մի կերպ չի նպաստում կողմերի հաշտեցմանը և այդ կապակցությամբ փաստաբանի պարտականությունների պատշաճ կատարմանը:

Նշել է նաև, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը դատարանին ներկայացրել է կեղծ տեղեկություններ, քանի որ 05.09.2014թ. դատական նիստի ընթացքում միջնորդել է հետաձգել Վարդան Պետրոսյանի՝ արդեն կայացած հարցաքննությունը, պատճառաբանելով, որ տուժողները չգիտեին, որ կայանալու է Վարդան Պետրոսյանի հարցաքննությունը և գուցե հարցեր ունենան նրան, մինչդեռ Դիմող կողմի պնդմամբ նախորդ նիստի ժամանակ հայտարարվել է, որ տեղի է ունենալու Վարդան Պետրոսյանի հարցաքննությունը:

Դիմելով Պալատ՝ Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանը և Լուսինե Հակոբյանը խնդրել են փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ:

2. <u>**Պալատի եզրահանգումը և որոշումը.**</u>

Գտնում եմ, որ դիմողի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Լուսինե Հակոբյանի դիմումի հիման վրա փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ պետք է հարուցել կարգապահական վարույթ՝ հետևյալ պատճառաբանությամբ.

«Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի **(այսուհետ՝ նաև Օրենք)** 39-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *փաստաբանը ենթակա է կարգապահական պատասխանատվության սույն օրենքի և փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջները խախտելու համար:*

Օրենքի 39.1 հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ *կարգապահական վարույթ հարուցելու հիմքն է փաստաբանի արարքի մեջ սույն օրենքի կամ փաստաբանի վարքագծի կանոնագրքով նախատեսված պահանջների խախտման հատկանիշների առերևույթ առկայությունը:*

Դիմումի բովանդակությունից առերևույթ բխում է, որ Դիմողն, ըստ էության, փաստաբան Ռուբեն Բալոյանին վերագրում է հետևյալ արարքների կատարումը՝

- ***փաստաբան Ռուբեն Բալոյանն անհարգալից ու արհամարհական է վերաբերվում պաշտպանական կողմին.***
- ***փաստաբան Ռուբեն Բալոյանը հանրությանը ներկայացնում է ապակողմնորոշիչ տեղեկություններ.***
- ***փաստաբան Ռուբեն Բալոյանն իր վստահորդներին պատշաճ խորհրդատվություն չի տրամադրում, չի գործում ի շահ իր վստահորդների.***
- ***փաստաբան Ռուբեն Բալոյանը չի ձեռնարկում իրենից կախված ողջամիտ միջոցներ վեճը հաշտությամբ լուծելու համար.***
- ***փաստաբան Ռուբեն Բալոյանն անհարգալից է վերաբերվում դատարանին, ինչպես նաև դատարանին ներկայացրել է կեղծ և***

ապակողմնորոշիչ տեղեկություններ.

* * *

ա) **<u>Փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից պաշտպանական կողմի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու վերաբերյալ.</u>**

Պալատի ընդհանուր ժողովի կողմից 11.02.2012թ. թիվ 1/4-Լ որոշմամբ հաստատված Փաստաբանի վարքագծի կանոնագրքի (**այսուհետ՝ Կանոնագիրք**) 5.1.2 ենթակետը սահմանում է՝ ***փաստաբանը պարտավոր է մյուս բոլոր փաստաբաններին ընդունել որպես մասնագիտական աշխատակիցներ և անկեղծ ու քաղաքավարի վերաբերմունք ցուցաբերել նրանց հանդեպ:***

Կանոնագրքի 5.2.1 ենթակետի համաձայն՝ ***փաստաբանը չպետք է՝ (1) թույլ տա այլ փաստաբանի նկատմամբ արժանապատվությունը և փաստաբանի համբավն արատավորող գործողություններ ու արտահայտություններ:***

Ըստ Դիմողի ներկայացուցիչների՝ Հակոբյանների փաստաբան Ռուբեն Բալոյանը NEWS.am-ի հետ զրույցում ասել է, որ դերասանի փաստաբաններին կարծես թե կարիք կա քրեական օրենսդրություն բացատրելու:

www.news.am լրատվական կայքէջում 23.05.2014թ. *«Կարծես թե անհրաժեշտություն կա դերասանի փաստաբաններին բացատրել Քրեական օրենսդրությունը»* հրապարակման[1] մեջ առերևույթ ցիտելով փաստաբան Ռուբեն Բալոյանի խոսքը՝ նշվում է. *«20-30 էջ է դեռ հետազոտվել, փաստաբանն ի՞նչ իրավունքով է գնահատական տալիս, ոչ մեկը չի կարող ներկա պահին գնահատականներ տալիս, ամեն ինչ իր ժամանակն ունի: Նման իրավունք ոչ մեկը չունի. ոչ Նիկոլայ Բաղդասարյանը, որը միջնորդության ժամանակ ցուցմունքներ է ներկայացնում, ոչ էլ ֆրանսիացի փաստաբանը: Կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել Քրեական օրենսդրությունը»*,- ասաց նա *[փաստաբան Ռուբեն Բալոյանը]*:

Դիմողի ներկայացուցիչների համոզմամբ վերը նշվածը զրպարտություն է, որի նպատակը Նիկոլայ Բաղդասարյանին վարկաբեկելն է:

<u>Կարգապահական վարույթի ընթացքում նշված փաստերի հաստատման դեպքում փաստաբան Ռուբեն Բալոյանի վարքագիծն առերևույթ կարող է հակասել Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերով նախատեսված կանոններին:</u>

* * *

բ) **<u>Փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից հանրությանն ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացնելու վերաբերյալ.</u>**

Դիմողի ներկայացուցիչները նշել են, որ 16.06.2014թ. «Կենտրոն» հեռուստաընկերության «Ուրվագիծ» հաղորդման ժամանակ Ռուբեն Բալոյանն անդրադառնում է Վարդան Պետրոսյանի սթափությունը գնահատած բժշկի կազմած թվով 2 արձանագրություններին, որոնցից մեկն առաջին պատճենն է, որի մեջ ութ օր անց կատարվել է ավելացում և հայտարարում, որ սթափությունը ստուգող երկրորդ արձանագրության մեջ գրված է «արտաշնչած օդի մեջ ալկոհոլի հոտ», սակայն չի ասում, որ այդ բառերից առաջ գրված է «ստուգման մեթոդ»:

Ըստ դիմումի նույն հաղորդման ժամանակ Ռուբեն Բալոյանն ասում է

[1] http://news.am/arm/news/210461.html/

«մահվան պատճառ է հանդիսացել Վարդան Պետրոսյանի կողմից հարբած վիճակում վարած և հողածածկ դուրս եկած մեքենայի բախումը Նիվային» արտահայտությունը:

Դիմող կողմը գտնում է, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը չհստակեցնելով, որ վերը նշվածն իր անձնական դիրքորոշումն է, այլ ոչ պաշտոնական մեղադրական եզրակացությունն իրականացնում է հանրությանն ապակողմնորոշելու ծրագիր, անտեսելով գործի փաստերը և օգտվելով հեռարձակվող ԶԼՄ-ներով հանրության առջև հանդես գալու լայն հնարավորությունից, ապակողմնորոշում և սուտ տեղեկություններ է տրամադրում ունկնդիրներին:

Սույն կետում նշված փաստերը չեն կարող դրվել փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքում, հետևյալ պատճառաբանությամբ.

«Կենտրոն» հեռուստաալիքով հեռարձակված «Ուրվագիծ» հաղորդումից **(այսուհետ՝ Հաղորդում)** [2] մեջբերումներ կատարելով Դիմողի ներկայացուցիչները գտնում են, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը Հաղորդման միջոցով ապակողմնորոշիչ տեղեկություններ է ներկայացնում հանրությանը:

Պալատը, նախ հարկ է համարում նշել, որ Դիմողի ներկայացուցիչների կողմից նշված և փաստաբան Ռուբեն Բալոյանին վերագրվող արտահայտությունները Կանոնագրքի համատեքստում քննության առնելու նպատակով անհրաժեշտ է 35 րոպե 26 վայրկյան տևողությամբ Հաղորդումը դիտարկել համակարգային առումով, այլ ոչ թե դրանից վերցրած առանձին արտահայտություններ, քանի որ դրանում արտացոլված զրույցը (հարցուպատասխանը) վերաբերում է մեկ թեմային, և փաստաբանի կողմից արված արտահայտություններն ամբողջ խոսքի մեջբերման դեպքում կարող են իմաստային առումով փոխվել:

Պալատը փաստաբան Ռուբեն Բալոյանի խոսքը գնահատելով Կանոնագրքի համատեքստում՝ արձանագրում է, որ Հաղորդման մեջ փաստաբան Ռուբեն Բալոյանն իրեն առաջադրված հարցերին պատասխանելու ընթացքում ներկայացնում է իր և վստահորդների դիրքորոշումներն ու տեսակետները: Մասնավորապես՝ հաղորդման ողջ ընթացքում Ռուբեն Բալոյանն իրեն առաջադրված հարցերի մեկնաբանությունները (պատասխանները) ներկայացնելիս օգտագործում է *«մեր դիրքորոշումն է...», «ես կասեի...», «կարող եմ ասել...», «ինձ համար պարզ է...», «գրեթե համոզված եմ...»* արտահայտությունները, որոնց միջոցով վերջինս ներկայացնում է իր անձնական կարծիքն ու մեկնաբանությունները հաղորդավարի կողմից հնչեցված հարցադրումների վերաբերյալ:

Պալատն արձանագրում է, որ սույն կետում նշված հիմքով փաստաբան Ռուբեն Բալոյանը Հաղորդման ընթացքում արված արտահայտությունների համար չի կարող հետապնդվել հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածով և Օրենքի 21-րդ հոդվածով երաշխավորված իրավական նորմերը:

Հաղորդման շրջանակներում փաստաբան Ռուբեն Բալոյանը հայտնել է իր և

---

[2] http://www.kentron.tv/index.php/am/programs/informational-political/urvagic/item/5377-urvagic-16-06-14.html

իր վստահորդների կարծիքը, դիրքորոշումը գործի վերաբերյալ, իսկ կարծիք (գնահատողական դատողություն) հայտնելու համար անձը չի կարող հետապնդվել՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 27-րդ հոդվածով երաշխավորված նորմը, համաձայն որի՝ ***յուրաքանչյուր ոք ունի իր կարծիքն ազատ արտահայտելու իրավունք:***

Կարծիքն ազատ արտահայտելու իրավունքը հանդիսանում է յուրաքանչյուր ժողովրդավարական հասարակության առաջընթացի կարևորագույն պայման, քանի որ դրա հիմքում ընկած է անհատի ինքնահիրացման գաղափարը:

«Կարծիքը» արտահայտում է անձի պատկերացումը որոշակի փաստերի կամ իրադարձությունների վերաբերյալ: Այն իրականության վերաբերյալ անձի որոշակի պատկերացումների ամբողջություն է: Այլ կերպ ասած՝ կարծիքի միջոցով արտացոլվում է ոչ թե որոշակի երևույթի վերաբերյալ օբյեկտիվ իրականությունը, այլ կոնկրետ սուբյեկտի ընկալումը, տեսակետը, որի ձևավորման հիմքում ընկած են մի շարք սուբյեկտիվ գործոններ:

Անդրադարձ կատարելով այս իրավունքի (որպես ոչ բացարձակ բնույթ կրող իրավունքի) սահմանափակման հարցին, Պալատը հարկ է համարում արձանագրել, որ այս իրավունքի բովանդակության տեսանկյունից կարևորվում է արտահայտած կարծիքի կամ համոզմունքի համար ***<u>հետապնդվելու արգելքի սկզբունքը</u>***: Ընդ որում՝ փաստաբանների պարագայում նշված սկզբունքն ամրագրված է նաև «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով՝ որպես երաշխիք:

Օրենքի 21-րդ հոդվածի 4-րդ մասով փաստաբանի գործունեության համար որպես երաշխիք ամրագրված նորմի համաձայն՝ ***<u>փաստաբանը չի կարող հետապնդվել, պատասխանատվության և բերման ենթարկվել</u>***, ձերբակալվել, կալանավորվել կամ ենթարկվել իրավունքների այլ սահմանափակման իր մասնագիտական պարտականությունների կատարման կապակցությամբ, ներառյալ՝ վարույթն իրականացնող և այլ մարմիններում հայտնած ***<u>կարծիքի կամ դիրքորոշման համար</u>***:

Փաստաբանի կողմից կարծիքի կամ դիրքորոշման համար հետապնդման արգելքի պահանջն օրենսդրորեն որպես երաշխիք ամրագրելու հանգամանքն ինքնին վկայում է դրա անարգել (առանց որևէ սահմանափակման) իրացնելու կարևորության մասին՝ հիմքում ունենալով նաև ՀՀ Սահմանադրության 27-րդ հոդվածը:

Ինչ վերաբերվում է փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից Վարդան Պետրոսյանի սթափության, ինչպես նաև արձանագրությունների մասին բերված խոսքին, ապա հարկ է նշել, որ հաղորդավարի՝ *«Դուք պնդում եք, որ Վարդան Պետրոսյանը եղել է ալկոհոլի աղդեցության տակ»* (Հաղորդման 13:41 րոպե) հարցին փաստաբան Ռուբեն Բալոյանը պատասխանում է. *«Ես համոզված եմ, որ Վարդան Պետրոսյանը գտնվել է ալկոհոլի ազդեցության տակ, ուղղակի մնում է ապացուցել...»* (Հաղորդման 13:44 րոպե): Շարունակելով խոսքը Ռուբեն Բալոյանը մեկնաբանություններ է անում արձանագրության վերաբերյալ՝ վերլուծելով նույն արձանագրության միջև առկա գրառումները՝ նշում է. *«փորձում են մատուցել, որ սա սպուգման եղանակնա»* (Հաղորդման 9:24 րոպե), և շարունակելով իր խոսքը մեկնաբանում է ՀՀ կառավարության որոշումը:

Նշված նախադասությամբ փաստաբան Ռուբեն Բալոյանն արտահայտել է իր

համոզմունքը, որը որպես դիրքորոշման (կարծիքի) դրսևորում չի կարող փաստաբանի նկատմամբ հետապնդման հիմք հանդիսանալ՝ հիմքում ունենալով Օրենքի վերը մեկնաբանված երաշխիքը:

Հատկանշական է, որ փաստաբանների մասնագիտական կարծիքների վերաբերյալ նրանց նկատմամբ կարգապահական պատասխանատվություն նախաձեռնելը կարող է բացասական նախադեպ ստեղծել: Քրեական վարույթն իրականացնող կամ այլ պետական մարմինների կողմից փաստաբանների կարծիքների վերաբերյալ հաղորդումներ կարող են ներկայացվել փաստաբանների պալատ՝ վերջիններիս ակտիվ գործունեությունը կանխելու նպատակով:

Ելնելով վերոգրյալից սույն կետում նշված հիմքով փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է կարգապահական վարույթ հարուցելու հիմքը (փաստաբանի այն արարքը, որում առերևույթ առկա կլինի Օրենքի կամ Կանոնագրքի խախտում):

* * *

գ) **<u>Փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից իր վստահորդներին պատշաճ խորհրդատվություն չտրամադրելու և ի շահ վերջիններիս չգործելու վերաբերյալ</u>**.

Դիմողի ներկայացուցիչները նշել են, որ փաստաբան Ռուբեն Բալոյանն իր վստահորդներին պատշաճ խորհրդատվություն չի տրամադրում, չի բացատրում, որ իրենք ի պատասխան պաշտպանական կողմի հարցերի՝ իրավունք չունեն դրսևորելու նման ագրեսիվ և անհարգալից վարքագիծ և որ այդպիսի գործողությունները կարող են համապատասխանել դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունքի հանցակազմին:

Դիմողի ներկայացուցիչները նաև նշել են, որ պատշաճ խորհրդատվություն չտրամադրելով՝ Ռուբեն Բալոյանը չի գործում ի շահ իր վստահորդների, ինչի հետևանքով նրանք պարբերաբար կատարում են հանցագործություն, այն է՝ դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք, որը դրսևորվում է դատավարության մասնակցին՝ պաշտպան Նիկոլայ Բաղդասարյանին հայհոյելով ու վիրավորելով:

Սույն կետում նշված փաստերը չեն կարող դրվել փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքում, հետևյալ պատճառաբանությամբ.

Կանոնագրքի իմաստով փաստաբանի կողմից պատշաճ խորհրդատվություն չտրամադրելու և ի շահ վստահորդների չգործելու վարքագծի դրսևորման առումով *«տուժող»* կողմ է հանդիսանում անմիջականորեն փաստաբանի վստահորդը, մինչդեռ սույն պարագայում փաստաբան Ռուբեն Բալոյանը չի հանդիսանում Դիմողի փաստաբանը, որի կողմից իր վստահորդներին պատշաճ խորհրդատվություն չտրամադրելու կամ ի շահ վերջիններիս չգործելու արարքի կատարումը վերաբերելի չէ Դիմողին (առավել ևս որ չի ներկայացվել ոչ պատշաճ խորհրդատվություն տրամադրելու կոնկրետ փաստ):

Ինչ վերաբերվում է պաշտպանական կողմին Ռուբեն Բալոյանի վստահորդների կողմից հայհոյելով ու վիրավորելով դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու արարքի կատարմանը, ապա Պալատը

հարկ է համարում նշել, որ Դիմողի ներկայացուցիչների նկարագրած արարքը քրեականացված արարք է, որի հանցակազմը նախատեսված է Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 343-րդ հոդվածով, իսկ Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի և 183-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով նշված հանցակազմի կապակցությամբ իրականացվում է հանրային հետապնդում:

Նշվածի հաշվառմամբ Պալատն արձանագրում է, որ Դիմողի ներկայացուցիչների կողմից նկարագրված վարքագիծը չի ընդգրկվում Կանոնագրքի տիրույթում, քանի որ Դիմողի ներկայացուցիչների կողմից շոշափվում է քրեադատավարական առումով հանրային հետապնդման ենթակա քրեական օրենսգրքով արգելված արարք առերևույթ կատարելու հանգամանք, ինչը Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 21-րդ հոդվածի առաջին մասով հռչակված անմեղության կանխավարկածի հաշվառմամբ, կարող է քննության առնվել և հաստատվել (կամ հերքվել) միայն Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված ընթացակարգով:

Բացի այդ, անդրադարձ կատարելով Դիմողի ներկայացուցիչների նկարագրված հանցակազմի քրեաիրավական նկարագրին, հարկ է նշել, որ քննարկվող հանցակազմը հանդիսանում է արդարադատության դեմ ուղղված հանցագործություն, որի ***հիմնական օբյեկտը*** արդարադատության մարմինների բնականոն (անխափան) գործունեության ուղղված հասարակական հարաբերություններն են, իսկ ***լրացուցիչ օբյեկտը՝*** դատավարության մասնակցի պատիվը, արժանապատվությունն ու բարի համբավը:

Միաժամանակ, հարկ է նշել, որ Դիմողի ներկայացուցիչների կողմից վերը նկարագրված արարքից տուժած անձը (անձինք) կարող է իր իրավունքների պաշտպանության նպատակով օգտվել Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ երաշխավորված իրավունքների պաշտպանության արդյունավետ միջոցների, այդ թվում՝ դատական պաշտպանության իրավունքից:

Ելնելով վերոգրյալից, սույն կետում նշված հիմքով փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է կարգապահական վարույթ հարուցելու հիմքը:

* * *

դ) **<u>Փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից վեճը հաշտությամբ լուծելու համար իրենից կախված ողջամիտ միջոցներ չձեռնարկելու վերաբերյալ</u>**.

Դիմողի ներկայացուցիչները վկայակոչելով Կանոնագրքի 3.7.1 ենթակետը՝ նշում են, որ փաստաբան Ռուբեն Բալոյանն իր դիտարկումները ներկայացնում է տուժող կողմից, ինչը ոչ մի կերպ չի նպաստում կողմերի հաշտեցմանը և այդ կապակցությամբ փաստաբանի պարտականությունների պատշաճ կատարմանը:

Դիմողի ներկայացուցիչների համոզմամբ փաստաբան Ռուբեն Բալոյանի վարքագիծը հակասում է Կանոնագրքի 3.7.1 ենթակետին:

Սույն կետում նշված փաստերը չեն կարող դրվել փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքում, հետևյալ պատճառաբանությամբ.

Պալատը հարկ է համարում սույն որոշմամբ անդրադարձ կատարել Կանոնագրքի 3.7.1 ենթակետի բովանդակությանը, համաձայն որի՝ ***փաստաբանը պարտավոր է ձեռնարկել իրենից կախված ողջամիտ միջոցները, վեճը հաշտությամբ լուծելու համար: Հակառակորդ կողմից հաշտության համաձայնության ողջամիտ առաջարկը փաստաբանը պարտավոր է քննարկել իր վստահորդի հետ, բացառությամբ այն դեպքի, երբ հակառակորդ կողմից այդպիսի առաջարկ ներկայացնելը միտում ունի անհարկի ձգձգել դատական գործը:***

Վերը մեջբերված վարքագծի կանոնի բովանդակության մեջ անհրաժեշտ է հատկանշել «***վեճը հաշտությամբ լուծելու համար»*** արտահայտությունը, որը Պալատի համոզմամբ հանրային հետապնդման կարգով քննվող քրեական գործերի դեպքերին վերաբերելի չի կարող լինել:

Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածից բխում է, որ հանցագործության ծանրությունից և բնույթից ելնելով՝ քրեական դատավարությունում քրեական հետապնդումն իրականացվում է հանրային և մասնավոր կարգով: Ընդ որում՝ նույն օրենսգրքի 183-րդ հոդվածով նախատեսված հանցագործությունների թվարկման մեջ չընդգրկված բոլոր հանցագործությունների վերաբերյալ գործերը համարվում են հանրային հետապնդման գործեր:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի ընդհանուր իրավասության դատարանում քննվող թիվ ԿԴ1/0026/01/14 քրեական գործով մեղադրյալ Վարդան Պետրոսյանին առաջադրվել է մեղադրանք ՀՀ քրեական օրենսգրքի 242-րդ հոդվածի 3-րդ մասով[3], որի քննությունը ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 33-րդ հոդվածի 3-րդ մասի հաշվառմամբ իրականացվում է որպես ***հանրային հետապնդման գործ***:

Քրեական դատավարությունում հանրային հետապնդման էությունը կայանում է նրանում, որ նշված գործերով՝ ելնելով դրանց հանրային վտանգավորության բարձր աստիճանից, քրեական հետապնդումը չի կարող դադարեցվել և քրեական գործի վարույթը չի կարող կարճվել մեղադրյալի կողմից տուժողի հետ հաշտվելու հիմքով: Այլ կերպ ասած՝ հանրային մեղադրանքի գործերով տուժողի բողոքի բացակայությունը կամ մեղադրյալի հետ հաշտության գալը չի հանգեցնում քրեական գործի վարույթն ավարտելուն:

Վերը նշված դիտարկումը համադրելով Կանոնագրքի հետ՝ Պալատն արձանագրում է, որ Դիմողի ներկայացուցիչների մեջբերված վարքագծի կանոնը՝ վեճը հաշտությամբ լուծելու առումով, այս պարագայում կիրառելի չէ: Միաժամանակ, հարկ է նշել, որ սույն պարագայում մեղադրյալի հետ հաշտությունը առավելագույն դեպքում, ՀՀ քրեական օրենսգրքի 62-րդ հոդվածը հիմք ընդունելով՝ դատարանի կողմից կարող է հաշվի առնվել պատիժ նշանակելիս՝ որպես պատասխանատվությունը և պատիժը մեղմացնող հանգամանք:

Կանոնագրքի 3.7.1 ենթակետով նախատեսված կանոնը (2-րդ նախադասությունը) հանրային հետապնդման գործերով կարող է կիրառելի լինել այն դեպքում, երբ ընդդեմ փաստաբանի ներկայացվեն հիմնավոր փաստեր առ

---

[3] Ավտոմեքենա կամ մեխանիկական այլ տրանսպորտային միջոց վարող անձի կողմից ճանապարհային երթևեկության կամ տրանսպորտային միջոցների շահագործման կանոնները խախտելը, որն անզգուշությամբ առաջացրել է երկու կամ ավելի մարդու մահ:

այն, որ վերջինս հակառակորդ կողմից հաշտության համաձայնության ողջամիտ առաջարկը չի քննարկել իր վստահորդի հետ, ինչը նշված կանոնի իմաստով պարտավոր էր անել:

Սակայն, նշվածի վերաբերյալ Դիմողի ներկայացուցիչների կողմից չի ներկայացվել հաշտության համաձայնության ողջամիտ առաջարկ ներկայացնելու փաստ, հետևաբար՝ այդ հիմքով փաստաբան Ռուբեն Բալոյանի վարքագիծը չի կարող քննարկվել Կանոնագրքի 3.7.1 ենթակետի շրջանակներում:

Ելնելով վերոգրյալից՝ սույն կետում նշված հիմքով փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է կարգապահական վարույթ հարուցելու հիմքը:

* * *

ե) <u>Փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու և դատարանին կեղծ և ապակողմնորոշիչ տեղեկություններ ներկայացնելու վերաբերյալ.</u>

Դիմողները նշել են, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը դատարանին ներկայացրել է կեղծ տեղեկություններ, քանի որ 05.09.2014թ. դատական նիստի ընթացքում միջնորդել է հետաձգել Վարդան Պետրոսյանի՝ արդեն կայացած հարցաքննությունը, պատճառաբանելով, որ տուժողները չգիտեին, որ կայանալու է Վարդան Պետրոսյանի հարցաքննությունը և գուցե հարցեր ունենան նրան, մինչդեռ Դիմողների պնդմամբ նախորդ նիստի ժամանակ հայտարարվել է, որ տեղի է ունենալու Վարդան Պետրոսյանի հարցաքննությունը:

Դիմողի ներկայացուցիչները գտնում են, որ վերոնշյալից հետևում է, որ Ռուբեն Բալոյանն իր պարտականությունները պատշաճ չի կատարում և իր վստահորդներին չի տեղեկացնում, որ տեղի է ունենալու Վարդան Պետրոսյանի հարցաքննությունը, ինչն ակնհայտորեն չի բխում վերջիններիս շահերից: Դիմողի ներկայացուցիչները նաև նշել են, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը ստում է դատական նիստի ընթացքում և փորձելով ապակողմնորոշել դատարանին՝ ձգտում է հետաձգել դատական նիստը:

Սույն կետում նշված փաստերը չեն կարող դրվել փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելու հիմքում, հետևյալ պատճառաբանությամբ.

Դիմողի ներկայացուցիչները փաստաբան Ռուբեն Բալոյանին վերագրելով դատարանին ստելու և ապակողմնորոշելու արարքի կատարումը՝ չեն ներկայացրել փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից իրեն վերագրվող արարքը կատարելու մասին համապատասխան հիմնավորումներ: Զուտ այն հանգամանքը, որ փաստաբան Ռուբեն Բալոյանը նախապես տեղյակ է եղել տվյալ նիստին կայանալիք Վարդան Պետրոսյանի հարցաքննության մասին, քանի որ նախորդ նիստին այդ մասին հայտարարվել է, չի կարող որակվել որպես դատարանին սուտ տեղեկությունների հայտնում և դրվել փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման հիմքում, քանի որ Դիմողի ներկայացուցիչների կողմից չեն ներկայացվել դատական նիստերի դահլիճում Վարդան Պետրոսյանի հարցաքննության մասին նախապես հայտարարելու և փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից այդ հայտարարությանն իրազեկ լինելու մասին հիմքեր

(ապացույցներ):

Ինչ վերաբերվում է փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից դատարանին անհարգալից վերաբերվելու վարքագիծ դրսևորելուն, ապա նշվածի հետ կապված հստակ արարք, որը Կանոնագրքի 4.1 ենթակետի իմաստով կարող է առերևույթ որակվել որպես խախտում, Դիմողի ներկայացուցիչների կողմից չի նշվել:

Բացի այդ, հարկ է նշել, որ փաստաբանի կողմից դատարանի նկատմամբ անհարգալից վերաբերմունք դրսևորելու կամ դատական նիստի բնականոն ընթացքն այլ կերպ խոչընդոտելու դեպքում դատարանն իրավասու է օգտվել ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 314.[1]-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետով վերապահված իրավունքից և դիմել Պալատ՝ փաստաբանին պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ դիմումով, ինչը նույն օրենսգրքի 7-րդ մասի 2-րդ պարբերության համաձայն՝ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթի հարուցման պարտադիր հիմք է:

Ելնելով վերոգրյալից՝ սույն կետում նշված հիմքով նույնպես փաստաբան Ռուբեն Բալոյանի նկատմամբ կարգապահական վարույթ չի հարուցվում՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ բացակայում է կարգապահական վարույթ հարուցելու հիմքը (փաստաբանի այն արարքը, որում առերևույթ առկա կլինի Օրենքի կամ Կանոնագրքի խախտում):

* * *

<u>Սույն որոշմամբ կարգապահական վարույթը հարուցվում է՝</u> *փաստաբան Ռուբեն Բալոյանի կողմից՝ «Կարծես անհրաժեշտություն կա նրանց բացատրել Քրեական օրենսդրությունը» արտահայտությունն արտաբերելու և այն թիվ ԿԴ1/0026/01/14 քրեական գործով պաշտպանական կողմի փաստաբաններին ուղղելու վարքագիծը՝ Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի համատեքստում սպուգելու նպատակով:*

Միաժամանակ Պալատը հարկ է համարում արձանագրել, որ փաստաբանի նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելն ինքնին չի նշանակում, որ փաստաբանը թույլ է տվել կարգապահական խախտում և այդ հարցի վերջնական պատասխանը կարող է տրվել միայն կարգապահական վարույթի իրականացման արդյունքում՝ Պալատի խորհրդի համապատասխան որոշմամբ:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39-րդ հոդվածի, 39.1 հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի, 4-րդ մասի, 39.3 հոդվածի, ինչպես նաև Կանոնագրքի հավելվածը հանդիսացող «Փաստաբանի նկատմամբ վարույթի իրականացման» կարգի 10-րդ հոդվածի պահանջներով,

Ո Ր Ո Շ Ե Ց Ի՝

1. ***Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Լուսինե Հակոբյանի դիմումի հիման վրա սույն որոշման «բ», «գ», «դ» և «ե» կետերում նշված հիմքերով փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր թիվ 1115) նկատմամբ կարգապահական վարույթ հարուցելը մերժել՝ կարգապահական վարույթ հարուցելու հիմքի բացակայության պատճառով:***

*2. **Անի Համելի ներկայացուցիչներ, փաստաբաններ Տիգրան Եգորյանի և Լուսինե Հակոբյանի դիմումի հիման վրա սույն որոշման «ա» կետում նշված հիմքով փաստաբան Ռուբեն Բալոյանի (արտոնագիր թիվ 1115) նկատմամբ հարուցել կարգապահական վարույթ՝ Կանոնագրքի 5.1.2 և 5.2.1 ենթակետերի խախտման հատկանիշներով (կարգապահական գործ թիվ ԿԳ-14161):***

*3. **Նշված կարգապահական վարույթով դիմող ճանաչել Անի Համելին:***

*4. **Հանձնարարել Պալատի աշխատակազմի ղեկավար Մանե Կարապետյանին՝***

*– **կարգապահական գործը հինգ օրվա ընթացքում հանձնել հերթական կարգապահական գործ նախապատրաստողին.***

*– **սույն որոշման մեկական օրինակ ուղարկել Դիմողին և փաստաբան Ռուբեն Բալոյանին՝ պարզաբանելով նրանց «Փաստաբանության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 39.[2] հոդվածով նախատեսված իրավունքները:***

<u>Ծանոթություն</u>: *Կարգապահական վարույթ հարուցելը մերժելու մասով որոշումը շահագրգիռ անձը կարող է բողոքարկել դատական կարգով որոշումը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում:*

Հայաստանի Հանրապետության
փաստաբանի պալատի նախագահ՝ Արա Զոհրաբյան

27 **նոյեմբերի 2014թ.**
թիվ 406-**Ա/ԿԳ**-14161
ք.Երևան